ՋԱԼԻԼ ՋԱԼԻԼ

ՔՐԴԵՐԻ ՎԻՃԱԿԸ 1880 Թ. ՇԵՅԽ ՕԲԵՅԴՈՒԼԱՅԻ ԱՊՍՏԱՄԲՈՒԹՅԱՆ ՆԱԽՕՐՅԱԿԻՆ

1877—78 թթ. ռուս-թուրքական պատերազմից հետո Օսմանյան կայսրությունն ապրեց տնտեսական և քաղաքական խոր ճգնաժամ։ Այն զգալի չափով խարխլեց պետության քաղաքական ազդեցությունը կայսրության մեջ բնակվող այլազգի ժողովուրդների մոտ։

Պատերազմի ավերիչ ազդեցությունը հատկապես նկատելի էր այն շրջանների տնտեսության վրա, որոնք անմիջապես հարում էին ռազմական գործողությունների գոտուն։ Երկրի հայաբնակ և քրդաբնակ արևելյան շրջանները, որոնք պատերազմի ժամանակ թուրքական բանակին մատակարարում էին սննդամթերք և զինյալ ուժ, բառիս բուն իմաստով ոտնատակ եղան պատերազմական գործողություններից։ Բանակների արշավանքների պատճառով մեծ վնաս հասցվեց բերրի հողերին, հացահատիկի ցանքերին, կրճատվեց անասունների գլխաքանակը։ Տնտեսական այս ծանր վիճակը է՛լ ավելի խորացավ երկրում վխտացող հաղարավոր դասալիքների ավազակային գործողությունների հետևանքով։ Ճանապարհների անապահով լինելը խանգարեց ապրանքափոխանակությանն ու առևտրին։ Պատերազմը խլեց նաև զգալի քանակությամբ աշխատուժ։ Այսպիսի վիճակ էր տիրում և՛ հայկական և՛ քրդական բնակավայրերում։

Պատերազմի հսկայական ծախսերը դատարկել էին պետական գանձարանը։ Օգտվելով Թուրքիայի տնտեսության համար ստեղծված ծանր կացությունից, եվրոպական երկրները ուժեղացրին իրենց տնտեսական և քաղաքական ազդեցությունը Բարձր Դռան վրա։

1879 թ. Թուրքիան վերջնականապես սնանկացավ։ Եվրոպական պետությունների պահանջով սուլթանը հրապարակեց «Մուհարեմի դեկրետը», որը փաստորեն անհավասար պայմանագիր էր պարտքատիրոջ և պարտապանի միջև։ Թուրքիայի կախյալ վիճակը եվրոպական կապիտալից ավելի ձևավորված արտահայտվեց հետագայում, երբ 1881 թ. հիմնադրվեց «Օտտոմանյան պետական պարտքի վարչությունը»։ Սրանով վարկատու երկրները՝ Անգլիան, Ֆրանսիան, Գերմանիան, Ավստրո-Հունգարիան և Իտալիան ստացան բացառիկ իրավունքներ ու արտոնություններ Թուրքական կայսրության ներսում։

Դատարկված պետական գանձարանը լրացնելու և եվրոպական երկրների հսկայական գումար կազմող պարտքը մարելու նպատակով Բարձր Դուռը անընդհատ մեծացնում էր ժողովրդից գանձվող հարկերի քանակը։ Տեղական իշխանությունները հատուկ ցուցում էին ստացել հարկերը գանձելու ժամանակ ոչ մի բանի առջև կանգ չառնել։ Օգտվելով դրանից, հարկերը գանձելիս պետական պաշտոնյաները թույլ էին տալիս ամեն տեսակի ապօրինություններ և կամայականություններ, իսկ ժողովրդի օրինական պահանջներին պատասխանում էին զենքով։ Հաճախ միևնույն հարկը մի տարվա մեջ գանձվում էր մի բանի անգամ։ Ժողովրդի կեղեքումը և բացարձակ անօրինականությունները թուրք պաշտոնյաների համար այն աստիճանի սովորական բան էր դարձել, որ նրանք մեծագույն նոանդով բազմաթիվ շրջաններում հարկեր գանձում էին նույնիսկ ապագա տարիների համար։ Այսպես, Բաշկալեի փաշան հարկահավաքներ էր ուղարկել գյուղերը բռնի հավաքելու հետևյալ տարվա հացահատիկի հարկը[1]։

Պետական պաշտոնյաները, որոնք փոխարինում էին մեկը մյուսին, հաշվի առնելով իրենց պաշտոնավարության կարճատևությունը, առաջին իսկ տարում բացարձակ կողոպուտի միջոցով

---

[1] „Correspondence respecting the condition of the populations in Asia Minor and Syria". Turkey № 4, (1880), London, 1880, p. 76.

շորթում էին հսկայական քանակությամբ հարստություն, իսկ հետո վերադասներին կաշառելով, մի առժամանակ ամրացնում իրենց դիրքերը[2]։

Սարսափելին գյուղացու համար ոչ միայն հարկի անչափ մեծությունն էր, այլ այն միջոցները, որոնց մշտապես դիմում էին հարկահավաքները իրենց պաշտոնավարության ժամանակ։ Հարկեր էին հավաքվում երբ փաշան ցանկանար, կամ երբ Կոստանդնուպոլսի Բարձր Դռան պահանջով կայմակամներն ու մութասարիֆները, աշխատանքից ազատվելու սպառնալիքի տակ, հրահանգ ստանային սուլթանի պալատ հասցնել որոշ քանակությամբ դրամ։

Էրզրումի անգլիական փոխհյուպատոս կապիտան Էվերստը իր հերթական զեկուցագրերից մեկում Էրզրումի շրջանի ազգաբնակչության ծանր վիճակի մասին գրում էր. «...Դժբախտ գյուղացիները հարկահավաքներից անխնա հալածվում են, նրանց գցում են բանտերը, երբ ի վիճակի չեն վճարել հարկերը, մինչդեռ ինքը՝ կառավարությունը պարտք էր բնակիչների մեծ մասին, վերջին պատերազմում նրանցից վերցրած պարենի դիմաց»[3]։

Հարկերի ծանրության տակ հեծում էին ոչ միայն հողագործները, այլ նաև անասնապահները։ Պատերազմից հետո զգալի չափով աճել էր անասնահարկը, իսկ անասնակերի պակասության հետևանքով ոչնչացվել էր մեծ քանակությամբ անասուն։ Ագնամը (ոչխարից գանձվող հարկը) ամեն մի գլխի համար հասել էր մինչև 20 պիաստրի, կրկնապատկվել էր հողային հարկը (էմլյակը)[4]։

Հարկային այսպիսի պայմաններում, տնտեսապես թույլ հայ կամ քուրդ ընտանիքները վերջնականապես քայքայվում էին, նրանց մեծ մասը հարուստ հողատերերի մոտ դառնում էր վարձու բանվոր, կամ էլ աշխատանք գտնելու համար գնում այնպիսի արդյունաբերական քաղաքներ, ինչպիսիք էին Բաքուն, Թիֆլիսը, Կոստանդնուպոլիսը։

Թիֆլիսում լույս տեսնող «Մշակ» հայկական թերթի համարներից մեկում, խոսելով Թուրքիայից եկած հայ և քուրդ փախստականների ծանր վիճակի մասին, Գրիգոր Արծրունին «Գաղթականությունը Թուրքաց Հայաստանից» հոդվածում գրում է. «Եթե չհարցնենք նրանց ով լինելու մասին, երբեք չենք ճանաչի թե նրանք քուրդ են և ոչ հայ, այն աստիճան մարդկանց կապում, հավասարեցնում, միակերպացնում, եղբայրացնում, միմյանց համերաշխ է դարձնում ընդհանուր վիճակը, ընդհանուր աշխատանքը»։

«Մշակի» վկայությամբ, քուրդ գաղթականների մեծ մասը Մուշի շրջանից էր։ Շրջանում տիրող տնտեսական քայքայվածությունը, վարչական ապարատի նեխվածությունն ու շահամոլությունը ողբալի վիճակի էր հասցրել Մուշի նման բերրի հողեր ունեցող շրջանի ազգաբնակչությանը։

Պատերազմից հետո քայքայվում էին քուրդ ցեղերը, որոնց տնտեսական հիմքը կազմում էր անասնապահությունը։ Ունեզրկված քրդերը ստիպված էին թողնել հարուստ արոտավայրերը, հեռանալ ցեղային համայնքից ու դաշտավայրերում՝ հողագործության միջոցով հայթայթել իրենց ընտանիքի գոյությունը պահպանելու միջոցներ։ Ռուսական ռազմագետ Ա. Մ. Կոլյուչակինը Թուրքիայի ասիական մասի ռազմա-ստրատեգիական նկարագրին նվիրված իր աշխատության մեջ, անդրադառնալով ռուս-թուրքական (1877—78 թթ.) պատերազմում ռազմական գործողությունների թատերաբեմ դարձած շրջանների տնտեսական վիճակին գրում է.

«Մագումով ոչ ցեղային կամ տոհմային կառուցվածքը, համախմբվածությունը և բարեկեցությունը լրիվ կորցրած քրդերը ապրում են հազիվ թե ավելի լավ, քան հայերը, մանավանդ այն պատճառով, որ բացի բոլոր տեսակի այլ հարկերից, որոնք գանձվում են նաև հայերից, նրանք կրում են նաև զինվորական ծառայություն, որը գոյություն ունեցող կարգի պայման-

---

2 Նույնպիսի վիճակ էր տիրում և Իրանի արևմտյան շրջաններում, ուր բնակչության գերակշռող մասը քրդեր էին։ Այսպես, Իրանի Միանդոաբ շրջանում երկու տարվա ընթացքում մեկը մյուսի ետևից փոխվեց հինգ կայմակամ։ Նրանցից յուրաքանչյուրը աշխատում էր իր հերթին շրջագայել ողջ շրջանը՝ ճանապարհին պահանջելով նվերներ և դրամական վճարներ („Correspondence respecting...", Turkey № 10, (1879), London, 1879, p. 57).

3 «Положение армян в Турции до вмешательства держав в 1895 г.», М., 1896, стр. 72.

Պատերազմի օրերին թուրքական իշխանությունները հապճեպ կազմակերպված զորամասերին պարենով ապահովելու համար դիմեցին ժողովրդին խաբելու ստոր միջոցին։ Պարտքով վերցնում էին սննդամթերք՝ դիմաց գյուղացիներին տալիս պարտամուրհակներ, պատերազմից հետո վճարելու պայմանով։ Սակայն պատերազմից հետո ոչ մի գյուղացի պարտամուրհակի դիմաց չստացավ վճար։

4 АВПР. ф. «Главный архив V-A$_2$», д. 1095, л. 24.

5 «Մշակ», 1882, № 103։

ներում արտակարգ ծանր բեռ է այն չքավորների համար, որոնք ի վիճակի չեն կաշառել այդ գործը վարող չինովնիկներին և սպաներին»։

Պետական ապարատի ծախվածությունն այնքան ակնհայտ էր, որ Յակիմանսկին, Դիարբեքիրի շրջանում նոր ստեղծված ռուսական փոխհյուպատոսարանի ներկայացուցիչը, իր առաջին իսկ հաղորդագրություններում ստիպված էր գլխավորապես կանգ առնել շրջանում տիրող ծանր վիճակի վրա։ Նրա վկայություններից պարզորոշ երևում է շրջանի գեներալ-նահանգապետ՝ Իզզետ փաշայի կամայականությունները, որոնք իրենց հերթին դարձել էին մյուս բոլոր չարիքների գլխավոր աղբյուրը։ Տալով Իզզետ փաշայի բնութագիրը Յակիմանսկին գրում է. «(Նա) զինվորական է, ի դեպ առանց որևէ հատուկ կրթության, բացարձակապես անփորձ մի վարչարար, բացահայտ կաշառակեր լինելով հանդերձ»[7]։

Նահանգապետի վարքագիծը նպաստում էր ստորին պաշտոնյաների քմահաճ վերաբերմունքին։ Դիարբեքիրի շրջանի դատական օրգաններն այն աստիճան բարոյազրկված էին, որ կարող էին ամեն մի հանցագործի կաշառքով արդարացնել։ Վիճելի հարցերում էլ արդարը նա էր, ով ավելի շատ կաշառք կտար։ Դատարաններից վատթար վիճակում էին գտնվում բանակը, ժանդարմերիան ու ոստիկանությունը։

Բանակը պատերազմից հետո լրիվ կորցրել էր իր մարտունակությունը։ Ծառայության մեջ կրելով սննդի ու հագուստի լուրջ պակաս և կանոնավոր աշխատավարձ չստանալով, զինվորները դիմում էին թալանի, իսկ շատ վայրերում, չունենալով զորանոցներ, բնակվում էին գյուղացիների տներում, կերակրվում նրանց հաշվին։ 1879 թ. ապրիլին Դիարբեքիրի նահանգի շատ բնակավայրերի բնակիչներ, որոնց տներում ձմեռել էին թուրքական զինվորներ, բողոքով դիմում են իշխանություններին՝ պահանջելով վերջ դնել կանոնավոր և անկանոն զորքերի ոտնձգություններին։

Կյանքի ու գույքի ապահովությունը Օսմանյան կայսրության արևելյան նահանգներում այնքան էր խարխլվել, որ ռուս-թուրքական պատերազմից հետո, 1878 թ. Բեռլինի կոնգրեսում, եվրոպական երկրները Բարձր Դռան ուշադրությունը հրավիրեցին երկրում բարեփոխություններ կատարելու անհրաժեշտության հարցի վրա։ Երկրում ռեֆորմների անցկացման ուղղությամբ նկատելի ջանասիրություն էր ցուցաբերում Անգլիան։ Ինչո՞վ էր դա բացատրվում։ Պատերազմից հետո Թուրքիան ընկել էր ֆինանսական և տնտեսական կախման մեջ Անգլիայից։ Այժմ Անգլիայի համար լայն հնարավորություններ էին ստեղծվել տարածելու և ուժեղացնելու իր ազդեցությունը Օսմանյան կայսրության արևելյան նահանգների վրա, որը հարկավ, խիստ կարևոր էր ռուսական ազդեցությանը հակադրելու համար։

1879 թ. Էրզրումի և Խարպուտի բնակիչների բողոքները լսելու և բարեկարգումներ անցկացնելու նպատակով Կոստանդնուպոլսից այդ շրջաններն են գործուղվում Աբեդդին փաշան և Մանաս էֆենդին, Դիարբեքիրի նահանգի վիճակը պարզելու և այստեղ ռեֆորմներ անցկացնելու նպատակով՝ Բեկիր փաշան և Իսկանդեր բեյը[8]։ Այս հանձնաժողովների մասին պահպանված հայերեն, ռուսերեն, անգլերեն լեզուներով հարուստ նյութերը հաստատում են նրանց անգործության մասին։ Դեռ ավելին, այդ նյութերը վկայում են, որ նշված հանձնաժողովների վրա ժողովրդի հաշվին ծախսված դումարները վերջինիս ավելի շատ վնաս բերին, քան օգուտ։ Միայն Բեկիր փաշային ուղեկցող անձնակազմում էին Սայիդ փաշան, Տրիպոլիի նախկին մութասերիֆը, Սուլեյման փաշան, սուլթանի համհարզ գնդապետ Շեկիր փաշան, գնդապետ Թահիր բեյը, երկու համհարզներ՝ կապիտան Մավրակորդատոսը, Մուլազիմ Յուսուֆ բեյը, անգլիացի ինժեներ Շեֆերը և ուրիշներ[9]։

Այս հանձնաժողովը Մարդինի վրայով ժամանեց Դիարբեքիր, որտեղ պետք է լսեր արդեն մի քանի ամիս աշխատավարձ չստացած ժանդարմների բողոքը։ Դիարբեքիրում հանձնաժողովը ոչինչ չկարողանալով անել նահանգի վիճակը բարելավելու ուղղությամբ, 1880 թ. փետրվարի 3-ին, այսինքն երեք շաբաթ հետո, Մոսուլի վրայով մեկնեց Բաղդադ։ Հանձնաժողովի ճանապարհածախսը հոգալու համար գեներալ-նահանգապետը դիմեց բնակչությունից բռնի կերպով հարկեր գանձելու միջոցին[10]։

---

6 А. М. Колюбакин, Материалы для военно-статистического обозрения Азиатской Турции, 1891, Тифлис, том III, ч. 4, стр. 60.

7 АВПР, ф. «Посольство в Константинополе», 1879 г., д. 1798, л. 9—9 об.

8 АВПР, ф. «Посольство в Константинополе», 1880 г., д. 1799, л. 1.

9 Там же, л. 3.

10 Там же, л. 5.

Պատերազմական գործողություններից քայքայված այս նահանգների բնակչությունը մեծ հույսեր էր կապում հանձնաժողովների գործունեության հետ, սակայն այս հանձնաժողովները շուտով հիասթափեցրին ժողովրդին։ Դիարբեքիրում ռուսական փոխհյուպատոս Յակիմանսկին հանձնաժողովի գործողություններում չտեսնելով ժողովրդի վիճակը բարելավելու ոչ մի ձգտում, դրանց նպատակը կապում է անգլիացիների կողմից ստրատեգիական հետախուզումների հետ[11]։

Իրականում Անգլիայի նպատակն էր՝ ռեֆորմների պատրվակով միջամտել Թուրքիայի արևելյան նահանգների ներքին գործերին և ուժեղացնել իր ազդեցությունն այնտեղ։ Դա ակնառու է դառնում այն փաստով, որ Մեծ Բրիտանիայի ներկայացուցիչների մտահոգության գլխավոր առարկան բանակն ու ժանդարմերիան էր։

Մատնանշելով բանակի ցածր կարգապահությունը, ժանդարմների ծախվածությունը, անգլիացի խորհրդատուները այդ վիճակից դուրս գալու ելքը գտնում էին բանակի և ժանդարմերիայի միավորման մեջ, նրանց կարծիքով ժանդարմների պարտականությունները ժամանակավորապես պետք է դրվեին զինվորների վրա։ Այդ առաջարկությունը արժանացավ Բարձր Դռան հավանությանը։ 1880 թ. փետրվարին անգլիական երկու մասնագետներ՝ կապիտան Նորտոնը և գնդապետ Կուպը սուլթանի հատուկ հանձնարարականով գործուղվում են կայսրության արևելյան նահանգները։ Նորտոնը Մուշում և Բիթլիսում պետք է կազմեր ժանդարմերիայի նոր պահազոր, իսկ Կուպը նշանակված էր Էրզրումի ժանդարմերիայի գլխավոր խորհրդատու (ինսպեկտոր)[12]։

Սակայն ո՛չ անգլիացի խորհրդատուների և ո՛չ էլ հատուկ հանձնաժողովների գործունեությունները չէին կարող որևէ լուրջ ազդեցություն ունենալ թուրքական ադմինիստրացիայի անխոտոր ուժեղացող փթածության վրա։ Էրզրումում Անգլիայի փոխհյուպատոս Էվերստը համեմատելով 1880 թ. Թուրքիայի արևելյան նահանգների վիճակը անցած 1879 թվականի հետ, տեսնում էր միմիայն առավել վատթարացում։

Ռուս-թուրքական պատերազմից հետո Թուրքիայի արևելյան և արևմտյան շրջանները կանգնեցին նոր տնտեսական վտանգի առաջ՝ չորայնության և անբերրիության հետևանքով տարածվեց դաժան սովը։ Անգլիական «Թայմս» թերթը, Կոստանդնուպոլսից ուղարկած հաղորդագրություններից մեկում տագնապով հայտնում էր. «Աղետը Դիարբեքիրում և Մոսուլում խիստ ժանգ է, վերջինիս բնակչությունը ամբողջապես զուրկ է գոյության միջոցներից»[13]։ Տեղական իշխանությունները ուշադրություն չդարձնելով բնակչության սովյալ վիճակին, սկսեցին գանձել երեք տարվա ապառքը։

Երաշտի հետևանքով խիստ բարձրացան հացի գները։ Օգտվելով այդ վիճակից, տեղական պաշտոնյաները հացի սպեկուլյացիայի միջոցով սկսեցին քամել ժողովրդի վերջին միջոցները։ Հեքարիեյի կառավարիչ Հասան փաշան, որ Վանի հացահատիկի շտեմարանում ուներ տասնորդից ստացած 12 հազար քիլե ցորեն, մերժեց սովյալ բնակչության խնդրանքը՝ վաճառելու այն։ Մինչդեռ մեծ կաշառք ստանալով ամբողջ ցորենի պաշարը ցածր գնով՝ մեկ չափը 27—60 պիաստրով, վաճառեց վաշխառուներին և սպեկուլյանտներին[14]։ Սպեկուլյացիան խիստ բարձրացրեց ցորենի շուկայական գինը։ Պետական պաշտոնյաների կողմից իրենց դիրքի նման չարաշահումները հազվադեպ երևույթներ չէին մյուս հարևան շրջաններում նաև։ Խարպուտի պաշտոնյաները միայն մի սպեկուլյանտի վաճառեցին 30 հազար քիլե հացահատիկ, ընդ որում մեկ քիլեն 120 պիաստրով, այն դեպքում, երբ քիլեի սովորական արժեքը 40 պիաստր էր[15]։ Պարզ է, որ սպեկուլյանտն իր գնած ցորենը շուկայում պետք է վաճառեր կրկնապատիկ, եռապատիկ գներով։ Դիարբեքիրի սպեկուլյանտները տեսնելով հարևան շրջանների հացահատիկի գների խիստ բարձրացումը, դադարեցրին իրենց հացահատիկի վաճառքը 70 պիաստրով։ Այսպիսով շուկայում ստեղծելով ցորենի մեծ պահանջ, նրանք կարողացան ավելի բարձրացնել հացի գինը։

Հացահատիկի սպեկուլյացիան այն աստիճան գրգռեց պետական պաշտոնյաների ախորժակը, որ որոշ շրջաններում, սպեկուլյանտի փոխարեն հացահատիկի գնորդները հենց իրենք՝

---

[11] Там же, л. 2 об.

[12] „Further correspondence respecting the condition of the populations in Asia Minor and Syria". Turkey № 23, (1880), London, 1880, p. 26, 28.

[13] „The Times", 12 March, 1880, № 29827.

[14] АВПР, ф. «Посольство в Константинополе», 1880 г., д. 1566, л. 3 об.

[15] Н. А. Халфин, Борьба за Курдистан, М., 1963, стр. 110.

պետական պաշտոնյաներն էին[16]։ Հացի գինը, ընդհանուր առմամբ վերցրած, 1880 թ. կազմում էր 120 պիաստր, մինչդեռ նախապատերազմյան շրջանում այն 25—30 պիաստր էր։

Հացի գների բարձրացումը մի շարք շրջաններում առիթ տվեց ժողովրդական ելույթների։ Վանում բնակչության զայրույթից վախենալով, հացավաճառները փակեցին իրենց բոլոր խանութները[17]։

Մոսուլի, Ջեզիրեի և Դիարբեքիրի բնակիչները ստիպված էին սնվել ավանակների, ձիերի մսով կամ էլ բույսերի արմատներով[18]։

Շուտով տարածվեցին նաև համաճարակները։ Հեքարիեում մոլեգնում էր դիզենտերիան։ Համաճարակի արագ տարածումը այն աստիճան վտանգավոր բնույթ էր կրում, որ թուրքական իշխանությունները էրզրումից անմիջապես Վանի շրջան ուղարկեցին բժիշկ Լանուանիին։ Վերջինս այդ շրջանը ուշադիր զննելուց հետո հայտարարեց, որ համաճարակի զոհ են դարձել Հեքարիեի 10 հազար բնակիչներ, գլխավորապես քրդեր[19]։

«Մշակ», «Մասիս» և այլ հայկական թերթերի 1880 թ. համարյա յուրաքանչյուր համարում հրապարակվում էին Իրանից ու Թուրքիայից ստացված ժողովրդի ողբալի վիճակը բնութագրող հաղորդագրությունները։

«Տակավին երկու օր առաջ,—գրված է «Մշակ»-ին ուղղված հաղորդագրություններից մեկում,—Վանեն, Կարինեն, Սղերդեն մեզ հասած հեռագիր և նամակներ կը գրեն թե սովն սաստկացած է, թե ամենուրեք ժողովուրդը մերկ և թշվառ ի քաղցոյ և ի հիվանդութենե մի կմախք դարձած փողոցներու անկյուններն թափառական կը հեծեն կը հեծկլտան, թե բավական անձինք սովամահ եղած են և միշտ օգնություն կը խնդրեն»[20]։

Սովն ու համաճարակն այնքան մարդկային կյանք էր խլում հայ և քուրդ ազգաբնակչությունից, որ անգլիական և ռուսական հյուպատոսների հաղորդագրությունները մեծ տագնապ էին արտահայտում կայսրության արևելյան նահանգների հետագա վիճակի մասին։ Ըստ այդ հաղորդագրությունների Բաշկալեի շրջանում մինչ 1880 թ. հոկտեմբերի սկիզբը համաճարակի զոհ էին դարձել ոչ պակաս քան 10 հազար մարդ, իսկ Բայազետի և Ալաշկերտի շրջակայքում սովից և համաճարակից մահացածների թիվը հաշվում էին 2—3 հազար մարդ։ «Համարյա նույնքան էլ մարդ (ճիշտ թիվը հայտնի չէ) Մեղինեի, Բոհտանի և Ջեզիրեի շրջաններում, չհաշված ճանապարհներին մնացած մի քանի հարյուր զոհյալների»[21]։

Հայկական «Պսակ» թերթի հաղորդագրության համաձայն, բոլոր հարևան ազգերի համեմատությամբ ամենից խղճալի վիճակում գտնվում էին քրդերը, որոնց դրությունը օրըստօրե վատանում էր[22]։

Թուրքական իշխանությունները ժողովրդի վիճակը բարելավելու մասին մտածելու փոխարեն, իրենց անմտածված, հաճախ էլ միտումնավոր որոշումներով ավելի էին խորացնում ստեղծված ծանր վիճակը։ Այսպես, 1880 թվականի պետական հատուկ որոշմամբ, արգելվում էր մի շրջանից մյուսը հացահատիկի տեղափոխությունն ու վաճառքը։ Որոշումը պետք է ուժի մեջ մնար մինչև 1880 թ. մարտը, երբ պետության կողմից նշանակված հատուկ հանձնաժողովը կքններ իրերի դրությունը[23]։

Սրանով թուրքական կառավարությունը կտրեց այն միակ օգնության հնարավորությունը, որ երաշտից զերծ մնացած շրջանները կարող էին ցույց տալ սովյալ շրջանների բնակչությանը։

Կառավարության հետևյալ քայլը, որ խիստ բացասական ազդեց հայ և քուրդ բնակիչների տնտեսության վրա, դա դրամական ռեֆորմն էր։ Նախապես տեղեկանալով մետաղի դրամի կուրսի իջեցման մասին, տեղական իշխանություններն ու սպեկուլյանտները շուկաները լցրին արդեն արժեքազրկված դրամներով։ Առևտրականները խուսափելով դրամներ ընդունելուց փակեցին խանութները։ Այսպիսով, ողջ արժեքազրկված դրամը մնաց ժողովրդի ձեռքին։ Յակիմանսկին Դիարբեքիրից այդ որոշման մասին հաղորդում էր. «Պետք է նկատել, որ գյուղական բնակիչները և հատկապես Քուրդիստանի և Միջագետքի նոմադները մինչ այժմ շրջանառության

---

16 «Положение армян в Турции...», стр. 77.

17 „Correspondence respecting...", Turkey № 4, (1880), London, p. 160—161.

18 АВПР, ф. «Посольство в Константинополе», 1880 г., д. 1799, л. 9.

19 ЦГВИА, ф. 450, д. 92, л. 117.

20 «Մշակ», 1870, № 84։

21 «Положение армян в Турции...», стр. 75.

22 «Պսակ», 1880, № 14։

23 «وقت», 15/XII, 1880, № 1853.

մեջ ունեին միմիայն այս թուրքական կիսակեղծ դրամները, և չէին օգտագործում ոչ ոսկի, ոչ էլ արծաթ»[24]։

Բարձր Դռան բացարձակ թշնամական վերաբերմունքի մասին է վկայում Էրզրումի ռուս հյուպատոս Օբերմիլլերի զեկուցագիրը, որով հաստատվում է այն փաստը, որ պետական դրամարկղները նահանգներում վերից ունեին գաղտնի հրահանգ կարճ ժամանակամիջոցում սպառել և փոխել ունեցած մետաղյա դրամները։ Միայն 1880 թ. առաջին ամիսներին հրապարակելով մետաղյա դրամի կուրսի իջեցման որոշումը, Բարձր Դուռը հնարավորություն էր ընձեռում բնակիչների արժեքազրկված դրամը մինչ ապրիլ ամիսը պետությանը հանձնել կես գնով, իսկ մայիսից դրանք լրիվ կորցնելու էին իրենց արժեքը։ «Այս վերջին որոշումը,—գրում է Օբերմիլլերը մեկ այլ զեկուցագրում,—այստեղ (ի նկատի ունի Էրզրումի նահանգը—Ջ. Ջ.) առաջ բերեց խիստ դժգոհություն, որը օրերս մուսուլմանների կողմից կարտահայտվի խռովությամբ»[25]։

Եվ իսկապես, սովյալ, խաբված ժողովրդին ոչինչ չէր մնում անել, քան իր զայրույթը արտահայտել տարբերային ելույթներով, որոնք հաճախ վերածվում էին զինված ընդհարումների։ Հաճախակի էին դարձել հացի ամբարների վրա զինված հարձակումները, հարուստ պաշտոնյաների նկատմամբ հաշվեհարդարը, հարկահավաքներին գյուղերից դուրս վռնդելը և այլն։ Այսպես, Մարդինի քրդերը ուժով բռնագրավեցին հացի սպեկուլյանտ ոմն Ջելոյից 50 քիլե ցորեն, միաժամանակ հակահարված տալով սպեկուլյանտին օգնության եկած զինվորներին[26]։

Դիարբեքիրում ժանդարմերիան վախենալով ժողովրդի ցասումից, հացի խանութների, սպեկուլյանտների և բարձր պաշտոնյաների տների մոտ կարգեց ժանդարմական պահակախումբ, իսկ որպեսզի քաղաքը պաշտպանի քաղաքամերձ բնակավայրերի սովյալների ամբոխի հարձակումից, ուժեղացվեց քաղաքի դարպասների պաշտպանությունը։ Դարպասները պաշտպանող զինվորները հրահանգ էին ստացել արգելել քուրդ սովյալների խմբերին քաղաք մտնել։ Այս միջոցառումները, փաստորեն, ոչ թե ժողովրդի ծանր վիճակը բարվոքելու համար էին, այլ հացի սպեկուլյանտների ու պետական պաշտոնյաների անօրինականությունները պաշտպանելու համար։ Այս բոլորն ավելի էին խորացնում ժողովրդի անհուսալի դրությունը, խրախուսում չարագործներին։

Սովի հետևանքով մեծ չափերի էր հասել քրդերի հողատարածությունների վաճառքը, որոնց գնորդները՝ հայ և թուրք առևտրականներն ու վաշխառուները, դրանք ձեռք էին բերում էժան գներով[27]։

Հացի պակասը խարխլեց քուրդ անասնապահների տնտեսական վիճակը։ Կիսաքոչվոր քուրդը, որ ամեն տարի որոշ քանակությամբ ոչխար էր փոխանակում ցորենի հետ և դրանով ապահովում իր ողջ տարվա հացը, այժմ, սովի տարիներին, հացահատիկի պակասի պայմաններում, ստիպված էր թողնել անասնապահությունը, մեկնել քաղաք լրացնելու լյումպեն պրոլետարների բանակը[28]։ Հազարավոր սովյալ քրդեր, պարենամթերք ձեռք բերելու հույսը կորցրած, դիմում էին ստարերկրյա հյուպատոսարաններին՝ օգնության հայցով։ 1880 թ. մայիսին Դիարբեքիրում ռուսական փոխհյուպատոս Յակիմանսկուն է ներկայանում Միդիայի ասորական համայնքի առաջնորդը 10 հազար քրդերի անունից հատուկ խնդրագրով՝ ստանալու Ռուսաստանի հովանավորություն, կամ էլ թույլ տալու տեղափոխվելու Ռուսաստան[29]։

Պատասխանի չսպասելով շատերը ընտանիքներով ինքնուսկամ ուղղվում էին դեպի հյուսիս, ռուսական սահմանները, այնտեղ փնտրելով փրկություն։ Ականատեսները պատմում են, որ դեպի Մասիս տանող ճանապարհները ողողված էին սովյալների ու աղքատների խմբերով, որոնցից շատերը ուժասպառ ընկած էին ճանապարհների եզրին ու այդպես էլ մահանում էին։

«Անցյալ, 1877 թվի ռուս-թուրքական պատերազմի երեսից,—գրում է «Պսակը»,—Հին Բայազետի և Արարատի սահմանագիծ ողողող Մասիսի լեռնաշղթան անթիվ վիրավոր սպանվածների գերեզման դարձած էր, այժմ նույն լեռնագոտին բազմաթիվ սոված, նուազած և մեռած քրդերի հանգստարան եղած է, որ ամեն մի պատի տակ, մի ձորամեջի տեսնում են մի-

---

24 АВПР, ф. «Посольство в Константинополе», 1880 г., д. 1799, л. 18.

25 АВПР, ф. «Главный архив V-A_2», д. 1095, л. 30.

26 Н. А. Халфин, Борьба за Курдистан, стр. 110.

27 «Մեղու Հայաստանի», 1880, 9/8, № 60, էջ 4։

28 «Մեղու Հայաստանի», 1880, 17/5, № 36, էջ 23։

29 АВПР, ф. «Посольство в Константинополе», 1880 г., д. 1799, л. 51 об.

քրդի երեխայ, մի կին, մի մարդ, մի աղջիկ մեռած անթաղ մնացած։ Այդ անժամանակ մահվան քնով քնածները (քրդերը) Տաճկաստանի կողմերում չկարողանալով և իսկապես չգտնելով հաց, ապրուստ, կամեցած են եղել անցնել այս կողմերը ապրելու հուսով, որոնց զորությունը իսպառ սպառվելով ճանապարհի կեսին, սարերի ձորերի խորքերում վեր ընկած անշընչացած են։ Նրանցից շատ քչերը լալով հասնելով մեր կողմերը, մեր բարեսիրտ հայերի շնորհիվ ապրում են»[30]։

Թուրքիայում հայ և քուրդ ազգաբնակչության ծանր վիճակը իր վրա հրավիրեց Ռուսաստանի հայ հասարակայնության ուշադրությունը։ Ռուսաստանի համարյա բոլոր հայկական կազմակերպությունները սկսեցին դրամական ու նյութական մեծ հանգանակություններ հավաքել Թուրքիայի սովյալների համար։ Այդ օգնության մի մասը բաժին էր հանվում և քուրդ սովյալներին։ «Մշակի» վկայությամբ հայերը ընդհանուր միջոցների շուրջ 25 տոկոսը բաժանել են քրդերին[31]։

Անգլիացիները օգտվելով սովյալ բնակչության ծանր կացությունից, ակտիվացրին իրենց գործունեությունը։ Ձևանալով բարեգութ, անգլիական ներկայացուցիչները որոշ դրամական սժանդակություն կազմակերպեցին սովյալ քրիստոնյաներին։ Վանի փոխ-հյուպատոս Կլեյտոնը իր դեսպանի միջոցով ստացավ 400 լիր, իսկ Էրզրումի փոխհյուպատոս, կապիտան Էվերստը 150 ֆունտ ստեռլինգ և այդ գումարը հատկացվեց միմիայն քրիստոնյա ազգաբնակչությանը։ Երկու հանգամանքներ պարզորոշ վկայում են Անգլիայի «օգնության» բուն նպատակը. նախ՝ ինչո՞ւ այդ մարդասիրական վերաբերմունքը սահմանափակվում էր միմիայն քրիստոնյա ազգաբնակչությամբ, մինչդեռ միևնույն վիճակում էին դտնվում և այլադավան ազգությունների ներկայացուցիչները, դիցուք քրդերը, և ապա ինչո՞ւ այդ «օգնությունը» տարածվում էր միմիայն ռուսական սահմանին մոտ բնակվող քրիստոնյա ազգաբնակչության վրա։ Պարզ է, որ անգլիացիները հետապնդում էին քաղաքական շահեր՝ դրամական օգնությամբ իրենց քաղաքական ազդեցությանը ենթարկել քրիստոնյաներին, և նրանց հակադրել ռուսական ազդեցությանը։ Վանում ռուս փոխհյուպատոս Կամսարականը իր դեսպանին ուղղած 1880 թ. ապրիլի 11-ի թվակիր զեկուցագրում մատնանշում է. «Անգլիայի գործակալները այս հարցում (սովյալների օգնության), գործում են ամերիկյան քարոզիչների միջոցով, տարածելով բողոքականությունը»[32]։

Սովը ոչ պակաս մոլեգնությամբ իշխում էր Պարսկաստանի քրդաբնակ շրջաններում։ 1877 թ. Պարսկաստանի արևմտյան հողերը ողողվեցին հորդահոս անձրևներով։ 1879 թ. խորշակից այրվեց բերքը։ Սովը դարձավ անխուսափելի։ Պարսկաստանի արևմտյան նահանգների բնակչության համար, իշխանությունները ոչ մի միջոց ձեռք չառան սպասվող աղետը նվազեցնելու ուղղությամբ։ Ընդհակառակը, մի շրջանից մյուսը հացահատիկի տեղափոխությունը արգելող որոշումը նպաստեց սովի ուժեղացմանը, սպեկուլյացիայի և հացի գների բարձրացմանը[33]։

1880 թ. սով էր Թավրիզի, Խոյի, Սոուջբուլաղի, Ուրմիայի, Սեննեի և այլ շրջաններում։ Այստեղ ամեն քայլափոխին կարելի էր հանդիպել ոչ միայն տեղի, այլ նաև Թուրքիայից եկած սովյալների խմբերի։ «Սարսափելին այն մանուկների անմխիթար վիճակն է, որ տառապյալ հայացքով ծնողներից հաց էին հայցում»,—նկատում է «Մշակ»-ի հոդվածագիրներից մեկը,— իսկ ծնողներին ոչինչ չէր մնում անել, քան սովամահությունից փրկելու համար վաճառել յուրյանց զավակներին։ Քիչ չէին դեպքերը, երբ ծնողները կամովին իրենց զավակներին նվիրում էին այս կամ այն հարուստին որպես նրանց սեփականություն։ Քուրդ երեխաների վաճառքն այն աստիճան էր տարածվել, որ Դիլման քաղաքը դարձել էր գլխավոր վաճառատեղի։ «...Այս քաղաքի հրապարակում,—գրում էին «Մշակ»-ին նույն 1880 թվականին,—քրդերը իրենց որդիներին աննշան գներով վաճառում էին և այս երևույթը դարձել էր սովորական»[34]։ Ըստ «Մշակ»-ի թղթակիցների վկայությունների, քրդական երեխաները վաճառվում էին 5 դրանով այսինքն ռուսական դրամով շուրջ մեկ ռուբլի 50 կոպեկ[35]։ Վաճառվող երեխաների մեջ մեծ թիվ էին կազմում Թուրքիայից փախած քրդերի զավակները, որոնց ծնողները Իրանում ևս

30 «Պսակ», 1880, № 14։

31 «Մշակ», 1880, № 113։

32 АВПР, ф. «Посольство в Константинополе», 1880 г., д. 1566, л. 1 об—2.

33 «Մշակ», 1880, № 48։

34 «Մշակ», 1880, № 84։

35 Նույն տեղում։

չգտնելով փրկության ոչ մի միջոց, դիմում էին վերջին և ամենից անհույս ելքին՝ իրենց երեխաներին վաճառելուն։

Իրանական Քուրդիստանի բնակիչներից ևս սովը նույնպիսի դաժանությամբ ինչպես Թուրքիայում, խլում էր մեծ քանակությամբ մարդկային զոհեր։ Թավրիզում Անգլիայի գլխավոր հյուպատոս Աբբոտը վկայում է, որ քրդական մի շարք գյուղեր ամբողջովին անմարդաբնակ էին դարձել, իսկ շատերում էլ մնացել էին միայն այրիները և երեխաները, որոնց ևս սպասում էր նույն վախճանը[36]։

Տարերային զայրույթը, որ համակել էր սովատանջ բնակչությանը, սարսափի մեջ էր դրել շրջանների պաշտոնյաներին և հարուստներին։ Ամեն օր այստեղ կամ այնտեղ լսվում էին խանութների կամ էլ հացի ամբարների խորտակումներ, նրանց պարունակությունների թալանի լուրեր։ Այս առիթով Թավրիզից «Մշակին» հաղորդում էին. «Սովը մի քանի տեղերում կատաղի խելագարության է հասցրել ժողովրդին, որոնք այլևս ուշադրություն չեն դարձնում ոչ կարգի, ոչ օրենքի և ոչ էլ ոստիկանության վրա, այլ բազմությամբ հարձակվում են և հափշտակում են ամբարները, որտեղ իմանում են թե հաց կա»[37]։

Շրջաններում տիրում էր քաոսային վիճակ. ամենուր կարելի էր հանդիպել բնակչության մեծ զանգվածների անընդհատ աննպատակ տեղափոխություններին։ Այս բոլորը ծնում էին նոր հուզումներ և նոր դժգոհություններ։

Տնտեսական-սոցիալական այսպիսի ծանր վիճակում էին Թուրքիայի և Իրանի քրդաբնակ շրջանները, երբ սկիզբ առավ քրդական ազատագրական շարժումը, որը 1880 թ. վերջին վերածվեց Իրանի դեմ մի հուժկու ապստամբության և որը, սակայն, իր թույլ կազմակերպվածության ու ապստամբությանը մասնակից ուժերի նպատակի դեռևս ոչ հստակ պատկերացման հետևանքով հեշտությամբ պարտության մատնվեց։ Այդ ապստամբության ղեկավարը Շիմդինանցի (Թուրքիա) հեղինակավոր քուրդ շեյխ Օբեյդուլլան էր, որի անձի շուրջը ժամանակի մամուլը մեծ աղմուկ բարձրացրեց և այդ ապստամբությունը ժամանակակիցների և հետագա ուսումնասիրողների կողմից ստացավ միանգամայն հակասական, իսկ հաճախ էլ սխալ մեկնաբանություններ։

1880 թ. ապստամբությանը նախորդող շրջանը հարուստ է քաղաքական մեծ իրադարձություններով, որոնց լուսաբանումը կնպաստի պարզ պատկերացում ունենալու ապստամբության հիմնական խնդիրների և բնույթի մասին։

* * *

Քրդական Հայդարի խոշոր աշիրեթը, որ բռնում էր Վանա լճի հյուսիս-արևելյան շրջանը, սովի հասցրած ծանր հարվածներից նկատելի կորուստներ կրեց։ 1879 թ. օգոստոս ամսին ցեղանդամների մեծ մասը զրկված օթևանից, սննդի պաշարից, բացահայտ դուրս եկավ թուրքական իշխանության դեմ։ Էրզրումի անգլիական հյուպատոսը՝ մայոր Տրոտտերը Հայդարի աշիրեթի ելույթի մասին տեղեկացնելով Պոլսի իր դեսպանին նշում է, որ դրա առիթը քրդերի հացի և օթևանի պահանջն էր[38]։ Աշիրեթի ղեկավարը՝ Մուսա-աղան թուրքական իշխանություններին ներկայացնում է մի պահանջագիր, ըստ որի թուրքական իշխանությունները պետք է ձեռնամուխ լինեին աշիրեթի համար բնակարաններ կառուցելուն, իսկ առաջիկա ձմեռը պետք է տեղավորվեին քրդական մուկրի, թեկուրի ցեղերի և նզդի քրդերի մոտ[39]։

Հայդարացիների պահանջը ջերմ աջակցություն գտավ շեյխ Օբեյդուլլայի կողմից։ Օբեյդուլլան ռուս-թուրքական պատերազմից հետո չէր թաքցնում իր թշնամական վերաբերմունքը դեպի թուրքական իշխանությունները։ Նրա այս վերաբերմունքը անհանգստացնում էր թուրք ստիճանավորներին, քանի որ քրդերի մեջ ամենամեծ հարգանք վայելող այս շեյխը կարող էր հետագա լուրջ անհանգստությունների պատճառ դառնալ։

Հայդարի ցեղի ելույթը համընկավ Հեքարիում Գյավուրի շրջանում բնակվող Հերակլի քրդական ցեղի ելույթին։ Օգոստոսի սկզբին թուրք կայմակամը Հերակլի քրդերից պահանջում է վճարել բոլոր հարկերն ու մինչ այդ ունեցած բոլոր պարտքերը։

---

[36] „Correspondence respecting the Kurdish invasion of Persia", Turkey № 5, (1881), London, 1881, p. 35.

[37] «Մշակ», 1880, № 48։

[38] „Correspondence respecting...," Turkey № 4, p. 67.

[39] Ibid.

Հերակլիցիները հնարավորություն չունենալով վճարել, հրաժարվում են կայմակամի հրամանը կատարելուց։ Վերջինս փորձում է ուժի միջոցով իրականացնել իր պահանջը՝ այդ նպատակով օգոստոսի 6-ին Գյավեռի գյուղերն են ուղարկվում 400 հոգուց բաղկացած մի զինյալ ջոկատ։ Հերակլիցիները զենքով են դիմավորում թուրքական զինվորներին։ Վերջիններս վերցնելով 40 պատանդ վերադառնում են Գյավեռ շրջկենտրոնը և տեղավորվում բնակիչների տներում, ստարտավորեցնելով անհատույց կերակրել, հոգալ զինվորների բոլոր կարիքներն ու պահանջները։

«Գյուղացիները,—գրում էր Վանից անգլիական փոխհյուպատոս Կլեյտոնը Տրոտտերին,— բողոքում են, որ զինվորների ներկայությունը անիծյալ է, քան արժանի օրհնանքի, որովհետև նրանց պաշտպանությունից չկա ոչ մի օգուտ, և դեռ ապրում են գյուղացիների հաշվին առանց հատուցելու»[40]։

Օգտվելով այս վիճակից, Օբեյդուլլան իր ներկայացուցիչներն է ուղարկում շրջակա քուրդ ցեղապետերի մոտ՝ պահանջելով անհապաղ զենքի դիմել։ Շեյխը տեղեկանալով, որ Մոսուլից 200 զինվոր է ուղարկվել Փալդա տեղի քրդերից ուժով հարկ հավաքելու համար, իր որդուն՝ Աբդուլ-Ղադրին մի խումբ զինյալ քրդերի հետ ուղարկում է Փալդայի քրդերին պաշտպանելու։ Սակայն դիշերային մի ընդհարման ժամանակ Աբդուլ-Ղադրի ջոկատը ջարդվում է և ետ վերադառնում։ Բաշկալեի մութասերիֆը իր պաշտոնական ներկայացուցչի միջոցով շեյխ Օբեյդուլլայից պահանջում է բացատրություն իր վարքագծի համար և հնազանդություն տեղական իշխանություններին։ Վանից, վալու հատուկ հանձնարարականով, ընդհարման պատճառները հետաքննելու համար Օբեյդուլլայի մոտ է ուղարկվում ոմն Աբուբեքիր էֆենդի։ Շեյխը իր բացատրության մեջ նշում է, որ ինքը ստիպված էր որդու գլխավորությամբ զինված ջոկատ ուղարկել անպաշտպան քրդերին օգնության, քանի որ թուրքական զինվորները խաղաղ բնակչության նկատմամբ իրենց պահել են սանձարձակ ու կատարել են բազմաթիվ չարագործություններ[41]։

Օբեյդուլլան ուշադրություն չդարձնելով թուրք աստիճանավորների անընդհատ այցերին, հրամայում է իրեն ենթակա բոլոր քրդերին հրաժարվել իշխանությանը հարկեր վճարելուց և անհրաժեշտության դեպքում զենքով դիմադրել։ Իր այս հայտարարությունը շեյխը հիմնավորում է այն փաստով, որ պետական հարկերը խիստ մեծ են և անհիմն[42]։

Քրդական խլրտումները և շեյխի բացահայտ թշնամական հայտարարությունները ստիպում են Բարձր Դռանը նախազգուշական միջոցների դիմել։ Շուտով փոխվում է անատոլիական 4-րդ բանակի զեկավար Դերվիշ փաշան, նրան փոխարինում է Սամիհ փաշան։ Վերջինս լիազորված ամենալայն իրավունքներով Էրզրումից տեղափոխվում է Վան՝ ավելի մոտ քրդական խռովությունների կենտրոնին։ Հեքարիեի շուրջն են կենտրոնացվում Էրզրումից, Էրզինջանից, Մոսուլից, Դիարբեքիրից, Վանից ժամանած թուրքական բանակի ստորաբաժանումները, կտրելով շեյխին Հեքարիեից դուրս գտնվող քրդական աշիրեթների հետ կապ հաստատելու հնարավորությունից[43]։ Ժամանելով Վան, Սամիհ փաշան շեյխի մոտ բանակցությունների է ուղարկում սուլթանի թիկնապահներից Բեհրի բեյին, հանձնարարելով՝ ամեն միջոցով (նվերների, խոստումների, համոզումների և այլն) շեյխին շեղել ապստամբելու մտադրությունից։ Նույնիսկ Բեհրի բեյը, շատերի վկայությամբ, սուլթանից շեյխի համար ուներ հատուկ նվեր՝ սուր և շքանշան[44]։

Շեյխ Օբեյդուլլայի գործողությունները իրենց վրա են հրավիրում նաև Անգլիայի դիվանագիտական ներկայացուցիչների ուշադրությունը։ Դրությունը քննելու նպատակով Հեքարիե են գործուղվում անգլիացիներ՝ լեյտենանտ Կրովդերը և քահանա Ֆոզերը։

Էրզրումում ռուսական հյուպատոս Օբերմիլլերի Կ. Պոլիս ուղարկած հաղորդագրություններից մեկում (8/9—1879 թ.) մատնանշելով այս երկու անգլիացիների ճանապարհորդության առկա դիտավորությունը, միաժամանակ բացահայտում է անգլիացիների բացասական վերաբերմունքը քրդական խլրտումներին[45]։ Անգլիական փաստաթղթերից քաղված մի շարք վկայություններ ևս գայիս են հաստատելու այն թշնամական դիրքի մասին, որ անգլիացիները

---

[40] Ibid, p. 104.
[41] Ibid, p. 79.
[42] АВПР, ф. «Миссия в Персии», 1877—96 гг., д. 1202, л. 5 об.
[43] „Correspondence respecting...", Turkey № 4, p .79.
[44] ЦГВИА, ф. 450, д. 98, л. 15 об.
[45] АВПР, ф. «Главный архив V-A_2», д. 1093, л. 38.

ռոնել էին ամեն մի հակաթուրքական շարժման նկատմամբ։ Ինչպես վկայում են իրենց իսկ՝ անգլիական դիվանագետների հաղորդագրությունները, Անգլիայի համար խիստ անհանդուրժելի էր քրդերի շարժման ուժեղացումը և հատկապես ասորիների, քրդերի ու հայերի հնարավոր միավորումը ընդդեմ Թուրքիայի։

Իհարկե, անգլիացիների համար հիմք կար այդ ուղղությամբ անհանգստանալու։ 1879 թ. սեպտեմբերի 6-ի հաղորդագրությունում Տրոտտերը հայտնում է իր անհանգստությունը ասորիների ղեկավար Մարշիմունի քրդական որոշ «անհանգիստ» աշիրեթների հետ ունեցած բարեկամական կապերի համար[46]։ Մարշիմունի հակաթուրքական վերաբերմունքի մասին Օբերմիլլերը նույն ամսին ռուսական դեսպանին գրում է. «...որ Մարշիմունը միացել է դժգոհների խմբին»[47]։ Հարկ է նշել, որ Մարշիմունի քրդական շարժումների նկատմամբ բռնած դրական վերաբերմունքը մեծ չափով բացատրվում էր հենց իրենց քրդերի՝ շեյխ Օբեյդուլլայի բազմաթիվ փորձերով ամրապնդելու քուրդ-ասորական բարեկամական հարաբերությունները։ Օբեյդուլլան, ինչպես այդ են վկայում մի շարք փաստաթղթեր, ամեն կերպ աշխատել է վերացնել առանձին քրդական ցեղերի և ասորիների միջև եղած անհաշտությունը։ Թավրիզում Անգլիայի ներկայացուցիչ Աբբոտը սեպտեմբերի 25-ին դեսպան Թոմսոնին ուղղված իր հաղորդագրության մեջ գրում էր, որ շեյխը վճռականորեն հայտարարել է, թե ինքը թույլ չի տա անկարգություններ տեղի ունենան, որ նրա թշնամանքը ուղղված է միմիայն թուրքական պետության դեմ[48]։

Ստանալով հատուկ հանձնարարական՝ խանգարել քուրդ-ասորական հնարավոր միավորմանը, անգլիական հյուպատոս Կլեյտոնը սեպտեմբերի 22-ին ուղևորվում է Հեքարիե Մարշիմունի հետ անձնական հանդիպում ունենալու։ Լոնդոնից պահանջվող բացատրագրում «հնարավո՞ր է արդյոք ասորա-քրդական միավորում ընդդեմ թուրքական կառավարությանը» Թավրիզից անգլիական հյուպատոս Աբբոտը տալիս է բացասական պատասխան։ Դեռ ավելին, Աբբոտը հույս է հայտնում օգտագործել ասորիներին ընդդեմ քրդական հնարավոր շարժման. «...Նույնիսկ փոքր կասկածի տեղիք չի տալիս այն, որ նրանք (ասորիները—Ջ. Ջ.) ինչպես անգլիական հովանավորության տակ կարող են լինել երջանիկ և ծաղկող համայնք, այնպես էլ օգտակար օգնական Բարձր Դռան համար Քուրդիստանում տեղ գտած անհանգստությունների լուծման հարցում»[49]։ Նույնպիսի վերաբերմունք անգլիական դիվանագետները հանդես էին բերում և հայ-քրդական ամեն մի հնարավոր միավորման նկատմամբ։ Կլեյտոնը մեծ ուշադրությամբ հետևելով Վանի շրջանում բարձրացող հայկական հակաթուրքական տրամադրություններին, ուժ ու եռանդ չէր խնայում դժգոհներին համոզելու՝ փոխել իրենց մտադրությունները որպես թե, դրանով ավելի չխորացնեն վիճակը, «չնեղացնեն թուրքերին»։

Ահա քաղաքական ու տնտեսական այսպիսի բարդ հանգամանքներում էր, որ զարգանում էր քրդական շարժումը։ Օբեյդուլլայի բոլոր փորձերը՝ միավորել քրդական աշիրեթները, հարևան ժողովուրդների ուժերը, հանդիպում էին մի կողմից թուրք փաշաների և այլ տիտղոսավոր անձանց խորամանկ և կաշառող քաղաքականությանը, իսկ մյուս կողմից՝ Անգլիայի թշնամական դիվանագիտությանը։

Սակայն, անկախ թուրքական ու իրանական իշխանությունների ջանքերից, անկախ Անգլիայի խորամանկ դիվանագիտությունից, հասունանում էր քուրդ ազգաբնակչության պոռթկումը, որը ըստ անգլիական թերթերի կանխագուշակման կարող էր ունենալ «տհաճ հետևանքներ»։

1880 թ. շեյխ Օբեյդուլլայի ղեկավարությամբ բարձրացած քրդական ապստամբությունը դարձավ նախորդող իրադրությունների անմիջական և տրամաբանական շարունակությունը։

---

[46] „Correspondence respecting...", Turkey № 4, p. 62.
[47] АВПР. ф. «Главный архив V—A_2», д. 1093, л. 37.
[48] „Correspondence respecting...", Turkey № 4, p. 101.
[49] Ibid, p. 102.

ДЖАЛИЛЕ ДЖАЛИЛ

ПОЛОЖЕНИЕ КУРДОВ НАКАНУНЕ ВОССТАНИЯ ШЕЙХА ОБЕЙДУЛЛЫ В 1880 г.

Резюме

Русско-турецкая война 1877—1878 гг. способствовала экономической разрухе Османской империи.

Западные державы начали играть все большую роль во внутренних делах страны. Иностранный капитал серьезно пошатнул и политический авторитет империи. Чтобы пополнить опустевшую государственную казну, султанские власти увеличили размеры налогов с населения. Взимание налогов в районах, населенных курдами и армянами, сопровождалось самоуправством и насилием турецких чиновников и местных феодалов. Из-за разбоев и грабежей был нарушен нормальный товарооборот. Все это усиливало нищету населения.

Голод, охвативший районы близ турецко-персидской границы в 1878—80 гг. окончательно подорвал экономику курдских землевладельцев и скотоводов. По свидетельству армянских, русских и английских газет, недовольство голодающего населения во многих районах выражалось активными выступлениями, перераставшими затем в вооруженные столкновения.

В борьбу против турецких и иранских поработителей включились многие крупные курдские вожди — феодалы, стремившиеся сбросить ненавистное для курдского народа иго Турции и Ирана.

В этой борьбе серьезное место отводится деятельности влиятельного курда Шейха Обейдуллы.

Восстание курдов в 1880 г. было результатом тяжелого социально-экономического положения курдского народа в Турции и Иране.